ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Վայք **16/05/2025**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 05
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:
Բացակա էին՝ Սիմոն Բաբայանը, Հրաչիկ Մանուչարյանը, Համբարձում Ջանոյանը, Եվա Մովսիսյանը, Սոնա Կարապետյանը, Թարո Ավետյանը, Կառլեն Մինասյանը
Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Մխիթար Մաթեվոսյանը
Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Անուշ Ղազարյանը
ԼՍԵՑԻՆ

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով,

1.Վայք համայնքի ավագանու 2025 թվականի մայիսի 16-ի թվով 5-րդ հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:
2. Վայք համայնքի Վայք քաղաքի Չարենցի 6 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող մարզադպրոցի շենքը «Վայքի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով, անորոշ ժամկետով հատկացնելու մասին /զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/:
3.Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդային եղանակով օտարելուն համաձայնություն տալու, վաճառքի մեկնարկային գներն ու պայմանները սահմանելու մասին /զեկուցող՝ Ռ. Մկրտչյան/:
4.Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին /զեկուցող՝ Ռ. Մկրտչյան/:
5.Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելուն համաձայնություն տալու, տարեկան վարձավճարի չափը և պայմանները սահմանելու մասին /զեկուցող՝ Ռ. Մկրտչյան/:
6.«ՋիԷմԷն Գոլդ Մայնինգ» ՍՊԸ-ի կողմից Վայք համայնքի Զառիթափ բնակավայրերի վարչական տարածքում հանքաքարի և/ կամ հանքանյութի և/ կամ խտանյութի վերամշակման գործարան կառուցելուն նախնական համաձայնություն տալու մասին /զեկուցող՝ Գ. Գևորգյան/:
7.Վայք համայնքի Վայք քաղաքի ողջ երկայնքով ձգվող մայր ջրատար առվի եզրերին աճած ծառերի և

թփերի հատմանը համաձայնություն տալու մասին /զեկուցող՝ Գ. Գևորգյան/:
8.Վայք համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 42-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ՉԱՐԵՆՑԻ 6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԸ «ՎԱՅՔԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ԱՆՈՐՈՇ ԺԱՄԿԵՏՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ)

Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝

1.Վայք համայնքի Վայք քաղաքի Չարենցի 6 հասցեում գտնվող, 10-003-0021-0015 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող մարզադպրոցի շենքը՝ 1044,75 քմ. տարածքով և 0.1364 հա մակերես հողատարածքով (վկայական՝ 2795922, տրված՝ 15.07.2010թ.), անհատույց օգտագործման իրավունքով, անորոշ ժամկետով հատկացնել «Վայքի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 43-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ)

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան.

1. Համաձայնություն տալ՝
1.1/ Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճուղի 45/3 հասցեում գտնվող 10-003-0010-0011 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 03032025-10-

0032, գաղտ. Q9DCUXHQUBCJ) բնակավայրերի նպատակային նշանակության 0.02132 հա մակերեսով հողամասը (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակելի կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 426 4000 (չորս հարյուր քսանվեց հազար չորս հարյուր) << դրամ:

1.2/ Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճուղի 45/4 հասցեում գտնվող 10-003-0010-0010 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 18022025-10-0013, գաղտ. 839CEJNBD4LG) բնակավայրերի նպատակային նշանակության 0.02608 հա մակերեսով հողամասը (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակելի կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 521 600 (հինգ հարյուր քսանմեկ հազար վեց հարյուր) << դրամ:

1.3/ Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճուղի 45/6 հասցեում գտնվող 10-003-0010-0008 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 10012025-10-0007, գաղտ.JEB6GPWLFMAE) բնակավայրերի նպատակային նշանակության 0.03451 հա մակերեսով հողամասը (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակելի կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 690 200 (վեց հարյուր իննսուն հազար երկու հարյուր) << դրամ:

1.4/ Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի 9-րդ փողոց 41/1 հասցեում գտնվող 10-022-0092-0044 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 28042025-10-0011, գաղտ. 6IX6VCFPVA3M) բնակավայրերի նպատակային նշանակության 0.04015 հա մակերեսով հողամասը (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակելի կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 87 500 (ութսունյոթ հազար հինգ հարյուր) << դրամ:

1.5/ Վայք համայնքի Գոմք բնակավայրի 5-րդ փողոց 7 հասցեում գտնվող 10-019-0025-0023 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 05052025-10-0003, գաղտ. KCJX7ZGRMSB6) բնակավայրերի նպատակային նշանակության 0.15452 հա մակերեսով հողամասը (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակելի կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 336 550 (երեք հարյուր երեսունվեց հազար հինգ հարյուր հիսուն) << դրամ:

1.6/ Վայք համայնքի Գոմք բնակավայրի 5-րդ փողոց 7/1 հասցեում գտնվող 10-019-0025-0024 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 02052025-10-0013, գաղտ. KJZ7X25AEVU9) բնակավայրերի նպատակային նշանակության 0.15428 հա մակերեսով հողամասը (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակելի կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 336 030 (երեք հարյուր երեսունվեց հազար երեսուն) << դրամ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 44-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14.3-րդ հոդվածի 9-րդ մասով , Կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» N 987-Ն որոշման 9-րդ կետով.

1.Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի՝ ս/թ մայիսի 13-ի N 2/փ- 145 դրական եզրակացությունը՝ Վայք համայնքի Գոմք բնակավայրում գտնվող, գյուղատնտեսական նպատակային նշանակության (հողատեսքը՝ արոտավայր), 10-019-0327-0062 կադաստրային ծածկագրով, 2,0 հա մակերեսով
հողամասի նպատակային նշանակությունը փոխել, որպես բնակավայրերի նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման հողերի:
2.Վայք համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 45-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ և ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ)

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 46-րդ, 48-րդ հոդվածներին և 76-րդ հոդվածի 3-րդ մասին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետին համապատասխան՝

1 Տալ համաձայնություն Վայք համայնքի տարածքում գտնվող համայնքային սեփականություն համարվող, գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերի մրցույթային եղանակով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելուն՝
1.1 Նոր Ազնաբերդ բնակավայրում գտնվող ընդամենը 80.87302հա (61.03826հա, 8.38338հա և 11.45138 հա), (կադաստրային ծածկագրեր՝ 10-034-0541-0001, 10-034-0120-0001 և 10-034-0117-0001) մակերեսով (հողատեսքը՝ այլ),
1.2 Խնձորուտ բնակավայրում գտնվող ընդամենը 36.486696 հա (0.78074հա, 1.30293հա, 7.05299հա, 1.49567հա, 1.29226հա, 0.918096հա, 0.49987հա, 1.37492հա, 3.31613հա, 18.14132հա և 0.31177 հա), (կադաստրային ծածկագրեր՝ 10-026-0140-0008, 10-026-0140-0001, 10-026-0103-0074, 10-026-0103-

0076, 10-026-0140-0007, 10-026-0143-0394, 10-026-0103-0077, 10-026-0140-0004, 10-026-0143-0395, 10-026-0105-0026, և 10-026-0140-0006) մակերեսով (հողատեսքը՝ վարելահող),
1.3 Խնձորուտ բնակավայրում գտնվող ընդամենը 2.74255 հա, (կադաստրային ծածկագիր՝ 10-026-0103-0075) մակերեսով (հողատեսքը՝ խոտհարք),
1.4 Նոր Ազնաբերդ բնակավայրում գտնվող ընդամենը 0.7744 հա (0.49348հա և 0.28092հա), (կադաստրային ծածկագրեր՝ 10-034-0122-0004 և 10-034-0122-0006) մակերեսով (հողատեսքը՝ խոտհարք),
1.5 Խնձորուտ բնակավայրում գտնվող ընդամենը 841.09972 հա (18.51845հա,13.363387հա, 22.38666հա, 39.72528հա, 142.87468հա, 133.83587հա, 137.90916հա և 332.48624հա), (կադաստրային ծածկագրեր՝ 10-026-0104-0001, 10-026-0136-0043, 10-026-0603-0001, 10-026-0141-0001, 10-026-0102-0001, 10-026-0143-0397, 10-026-0103-0078 և 10-026-0140-0001) մակերեսով (հողատեսքը՝ արոտավայր),
1.6 Նոր Ազնաբերդ բնակավայրում գտնվող ընդամենը 13.23471 հա (4.6436հա, 1.44275հա, 0.75595հա, 1.50192հա, 2.49691հա և 2.29358հա), (կադաստրային ծածկագրեր՝ 10-034-0119-0095, 10-034-0121-0013, 10-034-0119-0092, 10-034-0121-0012, 10-034-0116-0009 և 10-034-0119-0096) մակերեսով (հողատեսքը՝ վարելահող), հաստատելով վարձակալությամբ օգտագործման տրամադրելու նպատակը՝ բնապահպանական գործունեության համար, տարեկան վարձավճարի չափը 1 հեկտարի համար՝ 2 000 (երկու հազար) ՀՀ դրամ, հողամասերը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 25 (քսանհինգ) տարի:

2.Տալ համաձայնություն Վայք համայնքի տարածքում գտնվող համայնքային սեփականություն համարվող Խնձորուտ բնակավայրում գտնվող 0.18373 հա (կադաստրային ծածկագիր՝ 10-026-0152-0068) մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասը (հողատեսքերը՝ այլ) մրցույթային եղանակով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ օգտագործման տրամադրելու նպատակը՝գյուղատնտեսական գործունեության համար, տարեկան վարձավճարի չափը ՝ 6000 (վեց հազար) ՀՀ դրամ, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 25 (քսանհինգ) տարի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 46-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

«ՋԻԷՄԷՆ ԳՈԼԴ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՔԱՔԱՐԻ և/ԿԱՄ ՀԱՆՔԱՆՅՈՒԹԻ և/ԿԱՄ ԽՏԱՆՅՈՒԹԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳԱՐԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով 13.05.2025 թվականին «ՋԻԷՄԷՆ ԳՈԼԴ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից անցկացված հանրային քննարկման առաջին փուլի արձանագրությունը.

1. «ՋԻԷՄԷՆ ԳՈԼԴ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի վարչական տարածքում նախատեսվող հանքաքարի և/կամ հանքանյութի և/կամ խտանյութի վերամշակման (կորզման) գործարանի կառուցման մասին հարցը քննարկել հաջորդ հերթական նիստի ժամանակ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 47-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ՈՂՋ ԵՐԿԱՅՆՔՈՎ ՁԳՎՈՂ ՄԱՅՐ ՋՐԱՏԱՐ ԱՌՎԻ ԵԶՐԵՐԻՆ ԱՃԱԾ ԾԱՌԵՐԻ ԵՎ ԹՓԵՐԻ ՀԱՏՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳԱՐԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ և 42-րդ կետերի պահանջներով.

1.Թույլատրել «Ազատեկ ՀԷԿ» ՓԲԸ-ին Վայք համայնքի Վայք քաղաքի ողջ երկայնքով ձգվող մայր ջրատար առվի մաքրման աշխատանքներին զուգահեռ հատել առվի ներսի և եզրերին աճած ծառերը և թփերը:
2.Ստացված վառելափայտը անհատույց հատկացնել համայնքի անապահով ընտանիքներին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 48-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝

1.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2025 թվականի հունիսի 4–ին, ժամը՝ 16:00–ին:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 49-Ա)*

Ավագանու անդամներ

ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԿ ԱՎԱԳՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՈՍԿԱՆՅԱՆ

ԱՆՈՒՇ ԱՐԱՄՅԱՆ

ԱՐՏԱՎԱԶԴ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՍՏՂԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Անուշ Ղազարյանը

_____